

## ՄԻ ԷՁ ՏԻՐԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԻԼԻԿԵՅՈՒ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

### Հակոբ Բյուսեյան

Ինչպես շատ մատենագիրների այնպես էլ Տիրատուր Կիլիկեցու վերաբերյալ կենսագրական տեղեկությունները խիստ կցկտուր են: Ծնվել է թերևս ԺԳ դարի 80-ականներին: Գլածորում աշակերտել է մեծանուն Եսայի Նչեցուն: Որպես գրիչ Տիրատուրը հիշատակվում է 1309 թ. «Գալիձորում» ընդօրինակված ձեռագրերի, 1321 թ. հիշվում է որպես ստացող Թովմա Աքվինացու «Յաղագս եւթն խորհրդոց» երկի, իսկ 1337 թ. Եսայի Նչեցու հետ՝ իբրև «մեծ ռաբունապետ»: Նչեցու մահից հետո 1338 թ. գնում է Վայոց ձոր, Հերմոնի վանք, ուր հիմնում է վանական դպրոց: Սրա վերաբերյալ ժամանակի հիշատակագիրն արձանագրում է. «Ի վարժապետութեան ընդհանուր Հայկազեանս սեռի, երջանկի, մեծի եւ երիցս երանեալ հռետորի Տիրատուր առձայնելոյ, առ որ կամք ի վարժս կրթութեան...»: Նա Հերմոնի վանքի մեծ վարժապետ է հիշվում նաև 1349 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում: Տիրատուր վարդապետը հռչակված էր ոչ միայն իբրև հռետոր, այլ նաև՝ փիլիսոփա և աստվածաբան: Նրա բազում աշակերտներից այսօր հայտնի են Ավագտեր վարդապետի, Գրիգոր բանասերի և Մովսես կրոնավորի անունները: Մանկավարժականից զատ նա զբաղվել է մատենագրական գործունեությամբ: Նրա գրչին են պատկանում թվով 24 հանելուկներ՝ «Տիեզերալոյս վարդապետին Տիրատոյ ասացեալ հանելուկքն իմաստասիրականք» խորագրի ներքո: Հանելուկները վերաբերում են բնությանը, հասարակական կյանքին, Աստվածաշնչին, Հայոց պատմությանը: Սակայն Տիրատուր վարդապետի մատենագրական ժառանգության մեջ գլխավոր տեղ են զբաղեցնում ճառերը, որոնց թիվն անցնում է երեսունից: Ինչպես նկատում է Տ. Սավալանյանը, այդ ճառերը շարադրված են «յար-

<sup>1</sup> Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար, Մասն Բ (1326-1350), կազմողներ Լ. Խաչիկեան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Եր., 2020, էջ 275, 309, 494 :

<sup>2</sup> Դրանք հրատարակված են. Աս. Մնացականյան, Հայ միջնադարյան հանելուկներ, Եր., 1980, էջ 370-375:

դարուն ոճով եւ լի իմաստասիրական տեսութեամբք եւ հզօր բանիք»<sup>1</sup>: Այդ ճառերը, որոնք տակավին անտիպ են, կարոտ են պատշաճ լուսաբանման: Դրանք օգնում են վերհանել Տիրատուրի վարդապետական հայեցողւթյան մասնավոր գծերը: Ներկա հրապարակումը նվիրված է «Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա, դուստր Երուսաղէմի, ահա Թագաւոր քո գա առ քեզ...» (Ձաք. Թ 9-12) բնաբանով ճառին: Քաջատեղյակ լինելով անցյալի աստվածաբանական ժառանգոթյանը, անվերապահ հարգանք տաճելով այդ ժառանգոթյան նկատմամբ՝ Տիրատուրը, կարևոր համարելով, իր ճառի մեջ ամբողջապես ընդգրկել է վարդապետական նրբին դիտումներով աչքի ընկնող Վահրամ Ռաբունու (ԺԳ դ.) մեկնողական համաբնոյթ երկասիրոթյունը<sup>2</sup>: Ճառը շարադրելիս Տիրատուր վարդապետը կիրառում է պատմաբանասիրական, քերականական մեկնոթյան եղանակը, որի թելադրանքով նա բառը վերացարկում և դիտարկում է իմաստային տարբեր հարթոթյունների վրա: Այդ դպրոցի իսկ պահանջով նա օգտագործում է հոգեբնախոսական տարբեր երևոթյանների հակադրման սկզբունքը, ինչն օգնում է հոգեբանորեն առավել խորոթյամբ ընկալել մեկնվող տեղին: Ուրախ լինելու մարգարեական կոչն ինքնին ենթադրում է, որ դրան նախորդել է տխրոթյան կամ տրտմոթյան երկար մի շրջան: Ազո, տրտմոթյան հինկտակարանյան այդ շրջափոլը ներքուստ լուսավորված է Փրկչի գալստյան ակնկալոթյամբ, որն արդարանում է Քրիստոսի Երուսաղէմ մտնելով: Սա հնարավորոթյուն է տալիս «ազատոթին առնել քեզ ի տրտմոթենէդ, եւ փոխանակ միոյ աւուր պանդխտոթեան քո, կրկին տալ քեզ անդորրոթին»: Պատահական չէ, որ ուրախոթյան կոչը հասցեագրված է Սիոնի դստերը: Նա խորհրդապատկերն է եկեղեցու, որն ունի իգական սեռի հատկանիշ, քանզի «աճմանն միշտ եւ բազմաճնոթեանն իգական անուամբ կոչեն զեկեղեցի (ἐκκλησία) աստուածաբանքն»: Ինչպես դժվար չէ տեսնել, հեղինակը դարի աստվածաբանական մտակառուցմանը բնորոշ եղանակով ներդաշնակում է բառի լեզվական և հոգևոր-վարդապետական բովանդակոթյունը:

Տիրատուր վարդապետը քննոթյան է առնում իրավիճակով թելադրված բառի «բազմադիմի» կիրառոթյունները: Խոսքը «ահա թագաւոր քո

<sup>1</sup> Տե՛ս Ն.Եպս. Պողարեան, Հայ գրողներ. Ե-ԺԷ դդ., Երուսաղէմ, 1971, էջ 380 :

<sup>2</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. 734, թ.28ա – 39բ, 631 , թ.136բ-148ա :

գայ» արտահայտության «ահա» բառի բազմիմաստ կիրառությունների մասին է: Առաջինը այս բառը կիրառվում է «վասն զարդու եւ պերճութեան», երկրորդն ունի «հիացական» բովանդակություն, երրորդը՝ «սպառնական», չորրորդը՝ «ուրախական եւ բերկրական»: Իմաստային այս չորրորդ դաշտի մեջ է դիտարկվում բացատրվող «ահա»-ն:

Վերհանվում է նաև «ուրախ» բառի «բազմադիմի» նշանակությունը: Նախ ներկայացվում է նրա բառարանային բուն նշանակությունը, երկրորդ՝ հեգնական, ապա՝ մեղադրական, համաձայն այն իմաստի, որ մեկնիչ հայրը վերապահում է այդ բառին նրա ենթիմաստային կիրառություններում:

Ճառի հեղինակը բառիմաստի հանգամանալից քննության է ենթարկում «արդար», «փրկիչ» և «հեգ» միավորները: Այսպես, աչքի առջև ունենալով Դավիթ Անհաղթի «Սահմանքը», Արիստոտելի անունով հայտնի «Յաղագս առաքինութեան» երկը՝ նա արդար է կոչում բոլոր դատավորներին, իշխաններին, արքաներին, ովքեր ի պաշտոնե պետք է այդպիսին լինեն: Սակայն ադամորդիներից ոչ բոլորը կարող են լինել դատավոր, իշխան կամ արքա: Մինչդեռ Սուրբ Գրոց մեջ «արդար» է անվանվում նա, ով «բոլոր մասունս առաքինութեան ինքեան բերէ»: Եվ սա կատարվում է այն ժամանակ, երբ հակադիր վիճակների գործադրմամբ հոգեբարոյական ներդաշնակություն է հաստատվում մարդու մեջ, այսինքն՝ երբ մարդկային հոգու մաս կազմող «բանը» (միտքը, խոսքը) բարեզարդվում է «խոհականան, ցասումը՝ արիականան, ցանկութին՝ ողջախոհականան»: Այս բոլոր արժեքների համերաշխ ներկայության շնորհիվ պայծառացած մարդը «պատկերանայ Աստուծոյ»: «Փրկիչ» են անվանվում բոլոր նրանք, ովքեր ազատություն և հանգիստ են պարգևում գերության և չարչարանքի մեջ գտնվողներին: Բացատրելով «հեզութին» բառի իմաստը՝ նկատում է, թե հեզ են բոլոր նրանք, ովքեր «քաղցրութեամբ» հանդուրժում են նախատինքն ու հարվածները, թեպետ կարող են հանդիմանել և հակահարված հասցնել: Կրավորական բնույթի հատկանիշները՝ «հանդարտն եւ ծանրաշարժն եւ լռինն» նույնպես հորջորջված են հեզություն: Սակայն «հեզութին» որակված այդ հատկանիշներն ամենևին էլ խրախուսելի չեն պատերազմի ժամանակ կամ սահմանային իրավիճակներում: Ըստ այսմ, ինչպես կարծում է աստվածաբան հեղինակը, Ս. Գրոց մեջ հեզությունը տարբեր իրավիճակներում ունի տարբեր իմաստներ և կիրառության կերպեր, որովհետև «դիրամետ է առ վատթարա-

գոյն բնութեանս», ինչպես ծանր ժայռն անկարելի է զառիվեր գլորել, նոյնպես դիւրութեամբ այն կարելի է գլորել զառիվայր: Ըստ այսմ Աստված և աստվածային անձինք ամենևին չեն խրախուսում «անբարկանալին», քանզի բարկությունից զուրկ վիճակը չի կարող ներգործել տրտմության վրա, այսինքն՝ համաբնույթ էությունները չեն կարող փոխել մեկը մյուսին: Ուստի հանձնարարվում է «հակառակաքն զհակառակսն բժշկել, ըստ այսոցիկ եւ հեզութեամբն՝ զտարապարտ բարկութիւնն»: Բայց ըստ իրավիճակների, հանձնարարելի է թե՛ հեզությունը և թե՛ բարկությունը<sup>1</sup>, ինչը ցույց է տրվում աստվածաշնչական շատ օրինակներով (Մովսես, Փենեհես, Դավիթ, Պետրոս):

Այս երեք հասկացությունների (արդար, փրկիչ և հեզ) համանվանական հանգամանալից քննությամբ ասվում է, թե արդ՞ արժեքները հինկտակարանային իրականության մեջ հարաբերական են, մինչդեռ Նոր Կտակարանում դրանք ոչ միայն բնորոշումներն են Քրիստոսի, այլև բացարձակորեն նույնական են Քրիստոսին: Սակայն Քրիստոսին ընծայված այս որակումներն ըստ տնօրինության են և ոչ ըստ բնության, քանզի վերջինս «անհաս է յեղանակացս», այսինքն պատկանելով Աստվածության անդրանցական բնությանը, էապես անմատչելի է ձևերի տիրապետության տակ գտնվող նյութական, այսրաշխարհային իրականությանը և այդ իրականությամբ դաստիարակված մարդկային սահմանափակ ընկալման համար<sup>2</sup>: Այս փաստելու նպատակով դիմում է իմաստասիրա-

<sup>1</sup> Այս կապակցությամբ հիշատակելի են ս. Հովհան Ոսկեբերանի անունով բերված հետևյալ վկայությունները. «Առանց բարկութեան ոչ վարդապետութիւն առաջանայ , ոչ դատաստանք կայանան եւ ոչ մոլորութիւնք սանձահարին»: « Արդարեւ, բարկութիւնն է մայր ամենայն խրատու, քանզի անբան համբերութիւն սերմանէ զմոլորութիւնս». տե՛ս **Ալեքսանդր Զուղայեցի**, Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց, աշխտ. Հ. Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998, էջ 42, (թիւ 426,427): Ի դեպ աստվածային բարկության անհրաժեշտությունը վարդապետորեն հիմնավորել է տակավին Լակտանտիոսն (Գ - Դ դդ.) իր De ira Dei (=Աստծո զայրոյթի մասին) երկում :

<sup>2</sup> Աստվածության ու եղական իրերի համանվանական բնորոշման անկարելիության վերաբերյալ այս մեկնությունն ուղղակիորեն հարաբերվում է Թովմա Աքվինացու այն դրոյթին , թե «Աստծո և իրերի մասին ոչինչ չի կարելի արտահայտել համանվանական կերպով» ( Sum.I, quaest.13,5): «Ճշմարտության մասին» երկում նա գրում է. «- Հարկ է նկատել, որ անկարելի է համանվանական կերպով որևէ բան հաստատել արարչության և Աստծո վերաբերյալ: Չէ որ բոլոր համանվանական արտահայտություն-

կան չորս եղանակների օգնությամբ՝ համանունությանը, բազմանունությանը, փոփոխվող անուններին և բառերի տարբերությանն ըստ տարբեր լեզուների: Այսպես, համանունները թեպետ ձևով նույնն են, սակայն իմաստով բացառում են իրար. Օրինակ «շուն», «առիձ», խեցգետին» են անվանվում թե՛ երկնային համաստեղությունները, թե՛ կենդանի շունը, առյուծը, խեցգետինը: Այլ է բազմանունների պարագան. Նրանք թեպետ բառային տարբեր տարազով են ներկայանում, սակայն իմաստով նույնն են «որպես սուսերն եւ նրանն երկսայրին, եւ վաղակաւորն, դալարապարն եւ խարբն պողովատիկն եւ թուրն մի եւ նոյն ելով՝ զանազանք զոմանէ ստորոգին անուանց»: Իսկ անունների «փոխադրութիւնն» այն է, երբ մարդ ժամանակ անց ստանում է իր երկրորդ անունը, ինչպես «գլուխն առաքելոցն երբեմն Սիմոն, իսկ յետոյ Պետրոս կոչեցաւ»: Չորրորդ կարգույթն այն է, երբ նույն երևույթը տարբեր լեզուներում դրսևորվում է տարբեր բառանվամբ, ինչպես «մարդ»-ը հունարենում «ալթրապոս»-ով, հայերենում՝ «մարդ»-ով: Այս հիմամբ հաստատվում, թե բառանունները ոչ թե ըստ բնության են, այլ՝ ըստ դրության: Ուրեմն «արդար»-ը, «փրկիչ»-ը, «հեզ»-ը ոչ թե Քրիստոսի բնութենական էությունն են ներկայացնում, այլ տնօրինական կամ դրութենական հատկությունը, այսինքն՝ ոչ թե այն, թե ինչ է Քրիստոս ինքն իր համար (անդրանցական իմաստ), այլ ինչ է մարդկային ցեղի համար, որով մատնացուցված է այդ բնորոշումների տնօրինական բովանդակությունը:

Հեղինակը կիրառում է մեկնաբանական երկու եղանակ՝ «ըստ նկարագրին» և «ըստ իմացման»: Այսպես, մարգարեի «հեզ է, նստեալ յէջ եւ աւանակ» արտահայտությունն «ըստ նկարագրին» կամ բարոյաբանական բացատրության ( հակառակ հրեից մեջ տարածված մեկնության, որ աշխարհային թագավորի բնորոշումն է համարում հիշյալ բառերը), ներկայացնում է Քրիստոսի, որպես Արքայի, խոնարհությունը, ինչը հատուկ է այս աշխարհի «մարմնավոր» արքաներին: Մինչդեռ համաձայն «իմաց-

---

ներում անվան նշանակությունը հարաբերվում է իրերից յուրաքանչյուրին, որոնց այս անունը վերագրվում է համանվանական կերպով...Որքան էլ որ արարչությունը նմանեցվի Աստծուն, նա այդուհանդերձ չի կարող հասնել այն բանին, որ ինչ-որ բան հատուկ լինի նրան այն իմաստով, ինչը բնորոշ է Աստծուն» .Quaestiones disputatae de Veritate. Quaest.2, 11.տե՛ս **М.Ю.Реутин**, Отрицательный метод в богословии Майстера Экхарта- «Человек как слово». Сборник в честь Вартаана Айрапетяна,М.,2008, с.178 :

ման» կամ այլաբանական բացատրության, էշը և ավանակը «առակէ» երկու ժողովուրդներին՝ հրեաներին և հեթանոսներին, որոնցից առաջինը տեղյակ էր օրենքի առթած տաղտուկին, իսկ մյուսը, համառության պատճառով, անտեղյակ էր աստվածաշնորհական գիտելիքին<sup>1</sup>: Եւ Քրիստոս նստում է այս երկուսի, իբրև մեկ ամբողջության, վրա՝ դրանք (հրեությունն ու հեթանոսությունը) հաշտեցնելով իրար հետ :

Ճառում կիրառված այլաբանության շնորհիվ աստվածաբան հեղինակը համեմատում է Հին և Նորկտակարանային իրողությունները, և անվերապահորեն շեշտում Նորի առավելությունը, որովհետև եթե Հին կտակարանի՝ հրեից ժողովրդին խոստացված փրկությունը մարմնեղեն և ժամանակավոր էր ( Ջորաբաբել), ապա Նորը՝ Քրիստոսի, որպես երկնավոր, անմարմին Թագավորի, Երուսաղեմ մուտքով կանխանշում էր ադամորդու և առհասարակ բոլոր ժողովուրդների հավիտենական փրկությունը:

Բացի փրկաբանական բացատրությունից ճառում Ջաքարիայի մարգարեության համապատասխան տեղիին տրվում է նաև եկեղեցաբանական մեկնություն: Բացատրելով «նստջիք յամուրս կապեալք ժողովրդեանդ» բառերը՝ գրում է. «Թէպէտ նստաւ յետ Իսրաէլ ի Պաղեստին ընդ յամուրս տերութեամբ Ջաւրաբաբելի, այլ ոչ մշտնջենաւորապէս: Իսկ նորս Իսրաէլ, արձակեալ ի գբոյ անաստուածութեան, նստաւ յամրութեան եկեղեցոյ, որ հաստատեցաւ ի վիմէն ճշմարիտ ի վերայ առաքելական վիմի, վէմ անվանելի ի դրանց դժոխոց, զոր Եսայի «լեառն Տեառն» ասէ ի գլուխ լեռանց»: Դժվար չէ տեսնել, որ հեղինակն այստեղ արժանին է հատուցում հայրախոսական ավանդույթին, որ հինկտակարանյան լեռը կամ վեմն այլաբանությունն է համարում նորկտակարանյան եկեղեցու: Ճառիս մեկ այլ տեղում եկեղեցու խորհրդական այլաբանությունն են

<sup>1</sup> Այլաբանական այս օրինակ մեկնության ակունքը թերևս Ստեփանոս Սյունեցու «Կարճառոտ մեկնութիւն չորից անետարանչացն Քրիստոսի...» երկն է, ուր կարդում ենք. «Էշ նշանակէ զհրեից յիմար ժողովուրդն...եւ յովանական՝ զհեթանոսական ժողովուրդն, զի դեռ եւս անփորձ էին աստուածաշնորհութեան...». տե՛ս ՄՀ, հտ. 2, էջ 206-207:

<sup>2</sup> Այս կապակցությամբ բնորոշ են ս. Հովհան Ոսկեբերանի Եսայա մեկնության հետևյալ տողերը. «Լեառն եկեղեցի կոչէ եւ կրանիցն ամրութիւնս. Ջի զոր արինակ յորժամ զամուր լեռամբք, թէպէտ եւ բիրք բիրուց զաւրաց պատիցեն, աղեղունս լարիցեն, ի կոիս մատչիցին, տէգս արձակիցեն,, գեղարդունս շողացուցանիցեն, մեքենայս կազ-

համարվում մարգարեներն ու առաքյալները: Ավելի բարձրացնելով եկեղեցու հեղինակությունը՝ ճառագիր հեղինակը նրան վերագրում է երկնային ծագում, որովհետև արդարեւ եկեղեցի սուրբ ծնունդ է իմանալին Երուսաղէմի, քանզի սորա ամենայն կարգաց եւ կրաւնից հիմունք եւ արմատք ի վերուստ են եւ երկնատրք...»:

\* \* \*

Ճառը հրապարակվում է համաձայն Մաշտոցի անվան Մատենադարանի հետևյալ ձեռագրերի.

Ա = 2322 (Ժողովածոյ ճառից Տիրատրոյ վարդապետի)

Բ = 3319(Ժողովածոյ ճառից Տիրատրոյ վարդապետի)

Գ = 734

Դ = 631

#### Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԳՎԱՍՏԵԱՆ ՅԱԲԱՆԱԿԱԻ ԵՐՈՒՍԱԴԷՄ<sup>1</sup>

Պայծառ եւ հրաշալի է մեզ տաւնս այս, ո՛վ եղբարք. պայծառ, զի արարչակիցն Հաւր եւ Հոգւոյ Միաձին Որդին զարարածս իւր կազմելով<sup>2</sup> յառաջինն կամեցաւ<sup>3</sup> դարձուցանել<sup>4</sup> պայծառութիւն ի զգալիս յայս<sup>5</sup> ի<sup>6</sup> զարնանային եղանակիս<sup>7</sup> եկաւորէ յԵրուսաղէմ եւ՝ կենդանարար չարչա-

---

միցեն, հնարս հնարիցին, սակայն ամուր եւ անառիկ լերանցն ինչ ոչ վնասիցեն...».  
տե՛ս «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց հանդերձ ծանօթութեամբք...ի հ.Թաղէտէ վ.Թոռնեան», Վիեննա, 1893, էջ 187 :

<sup>1</sup> Աղբյուրներ.

Ա = ՄՄ, ձեռ.2322, թ. 80բ- 90բ

Բ = ՄՄ, ձեռ.3319, թ. 179բ -188բ

Գ = ՄՄ, ձեռ.734,թ. 28ա-39 բ

Դ = ՄՄ, ձեռ. 631, թ. 136 բ -148ա

**Խորագիր՝ Գ** Վահրամայ վարդապետի ասացեալ ի գալուստ Տեառն.«Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա , դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գա առ քեզ...»<sup>Դ</sup> Ի խորհուրդ գալստեան յԵրուսաղէմ յաւանակաւ. «Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի, ահա թագաւոր քո գա առ քեզ...»:

<sup>2</sup> ԱԴ > կազմելով

<sup>3</sup> Գ > կամելով

<sup>4</sup> Դ դարձուցանէ

<sup>5</sup> Դ այս

<sup>6</sup> Դ > ի

<sup>7</sup> Դ եղանակի

րանաւքն իւրովք առնէ<sup>2</sup> զգարունն հոգեւոր,/(28բ) այս է՝ ազատութիւն եւ նորոգութիւն<sup>3</sup> էիցս եւ հրաշալի, զի անմարմինն Աստուած ի մարմնի տեսանի եւ անմահից Թագաւորն հողեղէն կերպիւ արքայ ի Սիոն երեւի, եւ բազմեալն<sup>4</sup> ի հրեղէն կառս քերովբէականս եւ<sup>5</sup> ի վերայ իշոյ եւ յաւանակի<sup>6</sup> նորոյ նստի եւ ի սէրովբէից սրբաբանեալն անլռելի ձայնի ի հողեղինաց<sup>7</sup> ազանց զարհնութիւն ովսաննայիք ընդունի, հինաւորցն Աստուած տղայացեալ<sup>8</sup> ի Կուսէն, ի ծերոց եւ ի տղայոց Որդի Դաւթի փառաբանի, եւ որոյ վայելչութիւն փառացն լցին զերկին եւ զերկիր հանդերձից տարածմամբք եւ ոստովք<sup>9</sup> ծառոց պատուասիրեալ լինի: Արդարեւ, «արհնեալ են փառք Տեառն ի տեղւոջէ իւրմէ» (Եզեկ Գ 12), որ եկն ի լրումն արինաց եւ մարգարէից, ճշմարտապէս «այսաւր է, զոր արար Տէր, եկայք ցնծասցուք եւ ուրախասցուք» (Սղմ. ՃԺԵ 24), ի սմա<sup>10</sup> առցուք պարակից մեզ եւ զամենայն արարածս, որք ընդ մեզ դատապարտեալ ի սկզբանն, այսաւր կցորդելով մեզ նորոգութեամբ, վասն որոյ եւ ցնծութեամբ հաղորդ մեզ Աւետարանին ի մարգարէէն. «Լերինք ցնծասցեն<sup>11</sup>, ասէ, առաջի Տեառն, զի գայ, եւ հասեալ է Տէր ի դատաստան»(Սղմ. ՂԷ 8-9):/(29ա) Աստանաւր իրաւունս համարիմ յապաղումն առնել նախերգութեանս, եւ զխորհրդական<sup>12</sup> բան մարգարէիս տեսանել, թէ ընդէ՞ր յամենայն հողեղէն մասանց լերանց<sup>13</sup> միայն աւետէ ցնծալ: Ամենայն խնդութեանց լուր եւ աւետեաց պատգամ յաւէտ առ այնոսիկ<sup>14</sup> տրամադրի, որ պատա-

<sup>1</sup> ԱԳ > եւ

<sup>2</sup> ԳԴ առնել

<sup>3</sup> ԲԴ նորոգումն

<sup>4</sup> ԲԴ բնակեալն ] բազմեալն

<sup>5</sup> Դ > եւ

<sup>6</sup> Դ յովանակ

<sup>7</sup> Ա հեղեղինաց

<sup>8</sup> «հինաւորցն տղայացաւ». **Ս. Ներսես Շնորհալի**, Բան հաւատոյ. տե՛ս ՄՀ, հտ. ԻԱ, էջ 236 [262] :

<sup>9</sup> Գ ոստով

<sup>10</sup> ԱԲ > նմա

<sup>11</sup> ԱԲ ցնծասցէ

<sup>12</sup> Ա զխորհրդականն

<sup>13</sup> ԱԲ լերան

<sup>14</sup> Գ այնորիկ



հեն պետ եւ յառաջին<sup>1</sup> լինել կրողացն զխնդութեան բարիսն<sup>2</sup>, որպէս ի զարութիւն<sup>3</sup> յաղթութեան առաւել ցնծայ զարավարն եւ ի նաւահանգիստ ժամանեալ նաւին՝ նաւավարն<sup>4</sup>: Ըստ այսմ արինակի եւ վասն փրկական նորոգութեանս, զոր հրեղինացն<sup>5</sup> գերագոյնն<sup>6</sup> հողեղէն բնութեամբ հողանիւթիցն կատարելոցն էր<sup>7</sup> առաւելագունիցն կատարելոց եւ բարձրագունիցն. յայտուիկ<sup>8</sup> նախկին<sup>9</sup> ցնծալ հրամայէ մարգարէս<sup>10</sup>: Ապա թէ այլաբանութիւն ի բանէս<sup>11</sup> պահանջես՝ **լերինս** գիտեա զլերինս յաւիտենականս<sup>12</sup>, որոց սքանչելապէս լուսատու է Աստուած, որք<sup>13</sup> են առաքեալքն եւ մարգարէիցն գունդք, որք<sup>14</sup> հոգեւոր ցնծութեամբ նուագեն Աստուծոյ Հայր, որ առաքմամբ Միաձնին հոգեւոր արինութեամբ արինեաց զմեզ յա//((29բ)-ռաջին անիծիցն դատապարտութեան եւ ի գրաւորական արինացն յանցաւորութեան: Ըստ այսմ եւ այլք զայլ ինչ ի մշտնջենաւոր եւ յաստուածային լերանցն յայնցանէ<sup>15</sup> մատուցանեն ի պատիւ աւուրս ցնծութեան աստուածախաւս բանիւքն իրեանց, յորոց սրբնազան<sup>16</sup> պարուց եւ աստուածային<sup>17</sup> խմբից առանձինն զմեծին Չաքարիայ մարգարէին զտեսութիւն առցուք մեզ ի քննութիւն, որ լուսաւորագոյն իմն զխորհուրդս<sup>18</sup> աստուածային իրագործութեանս խաւսի ասելով. **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի. ահա:** Առ հինն Իսրայէլ խաւսի

<sup>1</sup> ԱԲ առաջին

<sup>2</sup> ԱԲ բարիս

<sup>3</sup> ԱԲ զարու

<sup>4</sup> Դ նաւապետն ] նաւին նաւավարն

<sup>5</sup> Գ հողեղինացն. **ողղված ի լուս.**

<sup>6</sup> ԱԲ վեհագոյնն

<sup>7</sup> ԱԲ կատարեաց] կատարելոցն էր

<sup>8</sup> ԱԲ յայնուիկ

<sup>9</sup> ԱԲ > նախկին

<sup>10</sup> Դ մարգարէն

<sup>11</sup> Դ բանիս] ի բանէս

<sup>12</sup> Դ յաւիտենից

<sup>13</sup> Գ որ

<sup>14</sup> ԱԲ որ

<sup>15</sup> ԱԲ այնոցիկ

<sup>16</sup> ԱԲ աստուածային ] սրբազան

<sup>17</sup> ԱԲ սրբազան ] աստուածային

<sup>18</sup> ԱԲ խորհուրդս

մարգարես, զի նախ նոցա տուա՝ փրկութիւն եւ ապա՝՝ հեթանոսաց: Արդ, տեսեալ զՓրկիչն եկեալ հասեալ, աւետարանէ, թէ՝<sup>2</sup> **Ուրախ լեր յոյժ , դուստր Սիոնի: Սիոն** զլեանէ իմանալ, որ շինեցաւ յառաջագոյն ամրոց Դաւթի, եւ **դուստր Սիոնի՝** զքաղաքն Երուսաղէմ, զի ընդ լեւրամբն կայ, եւ ասելն, թէ՝ **քարոզեալ դուստր Երուսաղէմի** զտաճարն նշանակէ ի քաղաքի՝<sup>3</sup>: Եւ դու տես , թէ զի՞արդ յարմար երկոցունց նոցա զհրամանն ընծայէ քաղաքին, զոր լերինն **դուստր** ասաց, զցնծութիւն ուսուցանէ, իսկ քաղաքին՝ **դուստր**, որ է նոյն ինքն //(30ա) տաճարն, զայս ցնծութիւն քարոզել յորդորէ, զի անդ էին մարգարէք եւ քահանայք: Դուք, ասէ, որ տեղեակ էք ձայնից արդարոցն ի լրումն բանից նոցա, ընդ իս քարոզեցէք զգալուստ Թագաւորին ամենեցուն՝ ասելով. **Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի:** Նախ արժան է մեզ գիտել, թէ զի՞նչ է ուրախութիւն եւ ուստի՞ գոյանայ՝<sup>4</sup>: Եւ զայս ստուգապէս ի հակառակէ նորին ծանախասցուք ի տրտմութենէն, զի յորժամ ուսցուք զտրտմութիւն՝ զընդդէմն նորա ուրախութիւն իմասցուք: Տրտմութիւն է ի տխրութիւն փոփոխեալ հոգւոյ ի պակասութենէ ախորժեացն եղելոցն: Եւ դարձեալ տրտմութիւն է զգայութիւն ցասման, զուարճացելոցն պակասութիւն: Արդ, զներհակն սոցա ուրախութիւն տեսցուք , որպէս ասացի. ուրախութիւն է ի խնդութեան փոփոխումն հոգւոյն յանպակասութենէ՝<sup>5</sup> ախորժելեացն: Եւ դարձեալ ուրախութիւն է զգայութեանցն հեշտութիւն, զուարճացելոցն անպակասութիւն: Եւ որպէս կրկին է տրտմութեան կիրք՝ ի մարմնաւորն եւ ի հոգեւորն՝ բարի եւ հոգեւոր զայն վարկանելի է տրտմութեան, որ վասն մեղաց ինքեան եւ կամ հասարակաց բնութեանս լինի, եւ չար եւ մարմնաւոր, որ վասն պակասութեան մարմնական վայելչութեան եւ կամ ի վերայ ննջեցելոց լինի: Իսկ թէ վասն է՞ր գովելի տրտմութիւն , որ ըստ Աստուծոյն է, զի «փրկութիւն առանց զղջանալոյ գործէ» (Բ Կորնթ. Է 10), ըստ առաքելոյ, նոյնպէս եւ ուրախութիւն կրկին է՝ գովելի եւ պարսաւելի: Ուրախութիւն գովելի, որ վասն լրման աստուածային կամացն լինի, վասն պահոց անբարտաւանութեան եւ աղաւթից երկարաձգութեան, ողորմութեան ան-

<sup>1</sup> ԱԲ > տուաւ

<sup>2</sup> ԱԲ > թէ

<sup>3</sup> ԱԲ > ի քաղաքի

<sup>4</sup> Բ ծնանի ] գոյանայ

<sup>5</sup> Բ յանպակասութիւն

փառասիրության, գետնախշտության յարակայության, եւ արտասուաց առատության եւ կամ վասն ընկերին յառաջադիմության՝ ի հոգեւոր եւ մարմնաւոր: Որպէս գրէ Պաւղոս.<sup>1</sup> «Որախ լերուք ի Տէր, եւ զուրախութիւն ձեր ոչ որ հանիցէ ի ձէնջ, եւ խնդալն ընդ խնդացողսն»(Փիլիպ.Դ 4): Իսկ ուրախութիւն պարսաւելի, յորժամ անբան հեշտութեան լինի, եւ ի փշոց նմանի ի ներքոյ կաթսայի , ըստ Սողոմոնի (տե՛ս Ժող.է 7), եւ ըստ Տեառն. «Վա՛յ ձեզ, որ ծիծաղիքը՞»( Ղուկ. Զ 25): Բեր տեսցուք , ըստ խոստմանն մերում, թէ ուստի գոյանան այսոքիկ . զի որքան ախորժանք մտացն անպակաս իցեն, տրտմութիւնն գոյանալոյ տեղի ոչ ունի, իսկ ի պակասելն տրամադրի, եւ այս լինիցի, զի յորժամ լսէ լուր անախորժելի կամ տեսանէ տեսութիւն անբերելի, յորմէ զգայարանք սրտին ճմլին, եւ ի ճնշմանէն մաղձն ի ներքին որովայնն ժողովի եւ ի դառնութենէն կսկիծն ի վեր առաքի, եւ զտրտմութիւն առնէ: Այսպէս, որքան ի վշտաց եւ ի նեղութեանց միջի շաղապատեալ է մարդն, ուրախութիւն ի նմա ոչ լինի, իսկ ի պակասելն այսոցիկ գոյանայ, զի յորժամ տեսանէ առ ձեռն պատրաստ եղեալ տեսութիւն, բերկրանայ, կամ լսէ զլուր անտեսաց՝ զառ յապա եղելոցն, ընդարձակին ընթացք շնչացն, եւ զուարճացեալ սիրտն ուախանայ, որպէս եւ մարգարէս անտարանելով զառ յապա փրկութիւն ի չարչարանացն ուրախանալ հրամայէ՝ ասելով. **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի**<sup>3</sup>: Այս ձայն, առ որս Աւետարանի կրկին լսեցեալ լինի, կամ ի դառնագոյն իրաց ազատութիւն, կամ բարւոյ իմիք ակնկալութեան լրումն, զորս<sup>4</sup> զերկոսեանս առ հինն Իսրայէլ է տեսանել, զի ըստ մարմնոյ ի տառապանս գոլով գերութեան, եւ ըստ հոգւոյ կապեալ կային<sup>5</sup> ի տոռունս մեղաց եւ կռապաշտութեան, եւ վասն այսորիկ ուսեալք ի մարգարէիցն յուսով ակն ունէին յայտնել ինքեանց Փրկիչ ի կրկին նեղութեանցն, որոց անտիս տայ մարգարէս<sup>6</sup>. **Ուրախ լեր**, որ ի տրտմութեան ես եւ ի սուգ. զի որում սպասէիր<sup>7</sup>. Ահա գայ Թագաւոր քո Քրիստոս՝ ազատութիւն առնել

<sup>1</sup> Բ Պաւղոս գրէ

<sup>2</sup> Ա վայ որ ծիծաղիք

<sup>3</sup> ԳԴ > Նախ արժան է մեզ գիտել , թէ զինչ է ուրախութիւն եւ ուստի գոյանայ... դուստր Սիոնի

<sup>4</sup> ԱԲ զոր

<sup>5</sup> Գ > կային

<sup>6</sup> Ա մարգարէն

<sup>7</sup> ԱԲ սպասէին

քեզ ի տրտմութենէդ, եւ, փոխանակ միոյ ատուր պանդխտութեան քո, կըրկին տալ քեզ անդորրորութիւն: Եւ զի ընդ մարմնոցն եւ ոգւոցն առնելոց էր ազատութիւն, թէ ընկալեալ էին,/(30բ) առադրեաց՝**զյոյժն**, զոր աւելորդ էր դնել, թէ երեւելին միայն էր փրկութիւն ասելով<sup>2</sup>. **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, եւ քարոզեա , դուստր Երուսաղէմի:** Եւ զայս ոչ անտեղի է քննել, թէ ընդէ՞ր իգական անուամբ նշանակեն զեկեղեցի մարգարէքն: Որպէս Դաւիթ ասէ. «Լուր դուստր եւ տե՛ս, խոնարհեցոյ զունկն քո» (Սղմ.ԽԴ 11), եւ այլուր. «Պատմեցից զամենայն արհնութիւնս ի դրունս դստեր թագաւորի» (Սղմ.Թ 15)// (Ա 82բ), եւ Սոփոնիայ ասէ<sup>3</sup>. «Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, եւ քարոզեա Երուսաղէմ, ուրախ լեր եւ զուարճացիր յամենայն սրտէ քումմէ, դուստր Երուսաղէմի» ( Սոփ.Գ 14), եւ միւս ոմն ասէ<sup>4</sup>. «Զուարճացիր եւ ուրախ լեր, դուստր Սիոնի, զի ահա ես եկից եւ բնակեցայց ի միջի քում, ասէ Տէր» (Սոփ. Գ 14-15), եւ Զաքարիայ , թէ՛ **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, քարոզեա , դուստր Երուսաղէմի:** Պարտ է գիտել, զի երեք են սէռք անուանց. արական, իգական եւ չեզոք: Եւ արական անուն է Հայր եւ պատանի եւ որդի, եւ իգական անուն է մայր, եւ աղջիկ եւ դուստր, եւ չեզոք անուն է. տղայ, մանուկ: Արդ, վասն աճմանն միշտ եւ բազմաձնութեանն իգական անուամբ կոչեն զեկեղեցի աստուածաբանքն, զի ծնանելն իգին է ուրոյն, որպէս եւ սերմանելն՝ արուին: Զոր եւ Եսայիաս տեսեալ հոգւոյ ակամբ զբազմաձնութիւն աւազանին , յանկարծակի հիացեալ ասաց. «Ո՞ տեսս, ո՞ լուաւ, զի երկնեաց երկիր ի միում ատուր, եւ ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն ի միում ատուր» (Ես.ԿԶ 8): Վասն այսր պատճառի մարգարէս Զաքարիայ իգական անուամբ ձայնեաց, զեկեղեցի ասելով. **Ուրախ լեր յոյժ,դուստր Սիոնի, ահա թագաւոր քո գայ:**Արդ, **ահա** բառս բազմադիմի լսի. է, ուր վասն զարդու եւ պերճութեան բանի դնեն աստուածաբանքն, որպէս Եզեկիէլ ասէ.«Ահա արք վեց գային ընդ ճանապարհի բարձու դրանն, որ հայի ընդ հիւսիս» (Եզեկ.Թ 2), եւ աւետարանիչն Ղուկաս ասէ.«Ահա երկու ի նոցանէ երթային ի նմին ատուր ի գեաւղ մի»(Ղուկ. ԻԴ 13), եւ թէ՛ «Ահա էր այր մի յԵրուսաղէմ, որոյ անուն էր Սիմէոն» (Ղուկ.Բ 25): Է եւ հիացական, ըստ

<sup>1</sup> Դ առազրեաց

<sup>2</sup> ԳԴ > ասելով

<sup>3</sup> Ա > ասէ

<sup>4</sup> Ա > ասէ

Դաւթայ. «Ահա , մեղաւորք են, եւ յաջողեալ է նոցա»( Սղմ.ՀԲ 12), եւ ըստ Եսայեայ.« Ահա Աստուած մեր, ահա Տէր, Տէր մեր՝ գայ զաւրութեամբ իւրով»( Ես.Խ 10): Եւ այսպէս մեծն ի վկայս Ստեփաննոս հիացեալ ասաց. «Ահա տեսանեմ զերկինս բացեալ, եւ զՈրդի մարդոյ, զի կայ ընդ<sup>2</sup> աջմէ Աստուծոյ»( Գործք Է 55): Է եւ սպառնական, ըստ այնմ. «Ահա ես ի վերայ քո, թշնամանողդ», եւ ըստ Եսայեայ. «Ահա գամ ժողովել զամենայն ազգս եւ զլեզուս»(Ես. ԿԶ 18): Եւ որպէս Եզեկիէլ սպառնայ ասելով.«Ահա եկն ար, ահա հասեալ է ժամանակ, ստացողն մի՛ խնդասցէ, եւ որ վաճառեն՝ մի՛ ողբասցի, զի հասեալ է բարկութիւն Աստուծոյ ի վերայ ամենայն անիրաւութեան մարդկան» (Եզեկ. Է 12) : Է եւ<sup>3</sup> ուրախական եւ բերկրական, զի յորժամ ցանկայ եւ փափագէ<sup>4</sup> ոք իրաց ինչ յառաջագոյն, եւ յանկարծակի հանդիպի, այսու բառիս վարի, որպէս ներքինին եթովպացւոց թագուհւոյն նստեալ ի կառս իւր երթայր, եւ ընթեռնոյր զԵսայի մարգարէն. յորժամ մերձեցեալ եղեւ<sup>5</sup> Փիլիպպոս յարեցաւ ի կառսն, եւ ուսոյց նմա ի Գրոց անտի զխորհուրդ տնաւրէնութեան Քրիստոսի, եւ թէ անկար է ումք մտանել յարքայութիւն երկնից, եթէ ոչ նախ ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, եւ իբրեւ հանդիպեցան ջրոյ, ուրախացեալ ասաց. «Ահա ջուր, զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ» (Գործք Ը 36) : Եւ Պաւղոս անտարանէր հեթանոսաց. «Ահա ար փրկութեան, ահա ժամանակ ընդունելի» (Բ Կորնթ. Զ 2), եւ առ իմաստուն կուսանսն. «Ձայն ուրախութեան եղեւ, ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա» (Մտթ. ԻԵ 6): Եւ որպէս ի մկրտութեան Տեառն ցանկային ոմանք զՔրիստոս<sup>6</sup> տեսանել<sup>7</sup> վասն վկայութեան Հար եւ Հոգւոյն,<sup>8</sup> վասն որոյ եւ<sup>9</sup> ի վերստին երեւիլն անտարանէր Յովհաննէս.

<sup>1</sup> Ա > մեր

<sup>2</sup> Բ ընդ կայ. **համարակալումով ուղղ.**

<sup>3</sup> Ա > եւ

<sup>4</sup> Ա փափաքէ

<sup>5</sup> Ա > եղեւ

<sup>6</sup> Բ զՅիսուս

<sup>7</sup> Գ տեսանել զՔրիստոս

<sup>8</sup> Դ Ահա ասացաւ մեզ յառաջագոյն, թէ ձայնն առ այնոսիկ պատշաճի, որք ակն ունին եւ սպասեն տեսանել զոք որպէս ի մկրտութեան Տեառն վասն վկայութեան Հար եւ Հոգւոյն ] Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի, եւ քարոզեա դուստր Երուսաղէմի: Եւ զայս ոչ անտեղի է քննել, թէ ընդէ՞ր իգական անուամբ նշանակեն...Հար եւ Հոգւոյն

<sup>9</sup> Դ > եւ

«Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի» (Յովհ.Ա 29): Սոյն-պէս մարգարէ Զաքարիայ,<sup>1</sup> որք վարժեալք ի մարգարէիցն ցանկային տեսանել զմարգարէացեալն ասաց. **Ուրախ լեր յոյժ, [ահա թագաւոր քո գայ].**

Տեսցուք, նախ թէ զի՞նչ է թագաւորութիւն, եւ ապա թէ ո՞վ է առաջին թագաւոր, եւ վասն որո՞յ թագաւորի են բանքս: Թագաւորութիւն է, ըստ ուղիղ բանին ի վերայ աշխարհի, որ իւր է վիճակեալ եւ ի նմա բնակելոցն իշխել արդարոյ ի հարկս եւ իրաւունս ի նոցանէ՝<sup>2</sup> առնուլ, եւ զնոսա ի խաղաղութեան պահել արտաքին թշնամեացն քաջութեամբ պատերազմաւ յաղթել, եւ կամ հիշատակութեան հնարիւք զխաղաղութիւն ողջունել, եւ զամենայն ինքեան հնազանդեալսն առանց իրիք պատճառի յարէնս եւ յիրաւունս անլուծանելի ունել բարեգործացն պատիւս եւ գովութիւնս շնորհել, եւ չարացն, եւ որք արտաքոյ արինաց արշաւիցեն, տանջանս եւ պատիժս հատուցանել, ոչ երեսելի փառաւքն անբարտաւանիլ եւ բարձրամտիլ, այլ Աստուծոյ թագաւորութեան սպասաւոր զինքն<sup>3</sup> կարծել, ըստ Սողոմոնի, թէ՛ «Լուարուք, թագաւորք, զի սպասաւոր էք Աստուծոյ թագաւորութեան» :Եւ զխաւորելով ասասցուք թագաւորութիւն է, որ իշխէ զբազումսն եւ զբաժանեալսն ըստ անձանց եւ ըստ արհեստից, նաեւ՝ ըստ բարուց, թէ դէպ լինի եւ ըստ կրանից բարեպաշտութեամբ եւ իմաստութեամբ ի խաղաղութիւն եւ ի բարեկարգութիւն զնոսա նուաճել: Այս , թէ զինչ է թագաւորութիւն: Յետ այսորիկ խնդրեսցուք, թէ ո՞վ է առաջին թագաւոր: Արդ, վերագոյն այսմ սամանի եւ եւս քան զոր կարեմք իմանալ եւ ճառել ո՞ այլ ոք<sup>4</sup> առաջին թագաւոր, բայց եթէ երանականն եւ փառաւորեալ Սուրբ Երրորդութիւն երկրպագեալ ի մի Աստուածութիւն եւ Տէրութիւն ըստ մարգարէին. «Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է» (Սղմ. ԽԶ 8), որ առ ի յինքեան բարեբարութենէ արարչագործելեացն<sup>5</sup> տիրէ՝ առ հասարակ վերնոցն եւ ներքնոց, եւ զամենեսեսան շարժելով միեղեն եւ պարզ զարութեամբն իրով յիրաքանչիւր բնութեանս եւ ի մի միաւորութիւն զնոսին պահելով<sup>6</sup> պնդէ եւ ձեացուցանէ ի ժողովա-

<sup>1</sup> Դ այսպէս եւ այժմ մարգարէս ] սոյնպէս մարգարէ Զաքարիա

<sup>2</sup> Բ նոցին ] ի նոցանէ

<sup>3</sup> Բ զինքն սպասաւոր

<sup>4</sup> Բ > այլ ոք

<sup>5</sup> Բ արարչագործելոցն

<sup>6</sup> Բ պահեալ

րարն իր նախախնամութեամբ եւ յաստուածարար պարզութիւն նախ զբազումսն եւ զզանազանսն , ըստ փառաց եւ ըստ պատուոյ զանմարմինսն, որք են պարզք եւ անշարադիրք բնութեամբ եւ ապա զգալիսս ամենայն, եւ առաջնապէս, զոր ի սմա նրբագոյնք են որպէս լուսաւորացոյ կարգ զանազանութեամբ պայծառութիւնն եւ ընթացից եւ ապա զորս ի հակառակ պատճառաց ի մի միութիւն եղեն գոյացեալ, որպէս մարդ ի հոգւոյ իմանալոյ գոյացեալ եւ ի մարմնոյ, երկնաւոր եւ երկրաւոր, մահկանացու եւ անմահ, ընդ որոց եւ զամենայն արիւնաւոր կենդանիս զառ ի բազմաց շարադրեալս, նաեւ զամենայն ազգի ազգի անշնչից տեսակս, այլ եւ զամենեցունց՝ զգալեացս զարմատ եւ զսկիզբն զտարերս, որոց սիրելութիւն է անհաշտելի եւ ատելութիւն՝ անքակտելի: Եւ արարչական հրամանան իրով զամենայն նիւթականս յիրում էութեան անլուծանելի ունի, եւ այսպէս ամենակալ գթութեամբն իրում ամենեցուն ըստ իրաքանչիւր տեսակի կառաւարէ եւ տիրէ: Սա է առաջին թագաւորն: Արդ, եւ վասն այսր թագաւորի են բանքս, զոր աւետարանէ մարգարէս<sup>2</sup>՝ ասելով. **Ուրախելր յոյժ , դուստր Սիոնի, ահա թագաւոր քո գայ**<sup>3</sup>: Քանզի այլ մարգարէքն , ժամանակաւ ի հեռուստ կալով խորհրդոյս, յարմարապէս նմին խաւեցան. զի Մովսէս ասէ<sup>4</sup>. «Մարգարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս. նմա լուարութեամբ» (Բ օր. ԺԸ 15): Եւ Բահաամ ասէ<sup>6</sup>. «Ծագեսցէ աստղ ի Յակոբայ, եւ ելցէ այր յԻսրայելէ» (Թիւք ԻԴ 17): Եւ<sup>7</sup> Դաւիթ. «Իջցէ որպէս անձրեւ ի վերայ գեղման» ( Սղմ. ՀԱ 6):

<sup>1</sup> Ա զամենեցուն

<sup>2</sup> Ա մարգարէ

<sup>3</sup> Գ Ահա թագաւոր քո գայ. Ահա ասացաւ մեզ յառաջագոյն, թէ ձայնն առ այնոսիկ պատշաճի, որք ակն ունին եւ սպասեն տեսանել զոք, որպէս ի մկրտութեան Տեառն վասն վկայութեան Հաւր եւ Հոգւոյն ոմանք ցանկային տեսանել զՔրիստոս : Վասն որոյ ի վերստին երեւելն աւետարանէր Յովաննէս . Ահա գառն Աստուծոյ : Այսպէս եւ այժմ մարգարէս, որք վարժեալք ի մարգարէիցն ցանկային տեսանել զմարգարէացեալն. Ասէ. Ահա թագաւոր քո գա ] եւ գայս ոչ անտեղի է քննել, թէ ընդէ՞ր իզական անուամբ նշանակեն զեկեղեցի մարգարէքն...թագաւոր քո գա: Բ > Տեսցուք նախ թէ զի՞նչ է թագաւորութիւն եւ ապա թէ ո՞վ է առաջին թագաւոր...ահա թագաւոր քո գայ:

<sup>4</sup> Դ > ասէ

<sup>5</sup> ԳԴ լուիջիք

<sup>6</sup> ԱԳԴ > ասէ

<sup>7</sup> Գ > եւ

Եւ դարձեալ ասէ՛. «Առաքէ զբան իւր յերկիր» (Սղմ. ՃԽԷ 15): Եւ թէ՛” Անդ ծագեցից եղջիր ի Դաւիթ» (Սղմ.ՃԼԱ 17), Սողոմոն/(Բ 182ա)ասէ՛<sup>2</sup>. «Ձայն եղբորորդոյ իմոյ եկն» (Երգ. Ե 2),եւ<sup>3</sup> նահապետն Յոբ ասէ՛<sup>4</sup>. «Երկիր եւ ի նմանէ ելցէ հաց» (Յոբ ԻԸ 5), եւ<sup>5</sup> Եսայի. «Ահա կոյս յղասցի եւ ծնցի<sup>6</sup> որդի եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ,» (Ես. Է 14), եւ թէ՛ «Ծաղկեսցի Իսրայէլ , եւ լցցի ամենայն երկիր» (Ես. ԻԷ 6), եւ թէ՛ ` «Եկես // (31ա)ցէ ի Սիոնէ փրկիչ, եւ դարձուցէ զամբարշտութիւն Յակոբա» (Ես. ԾԹ 20): Եւ թէ՛ «Առաքեսցէ նոցա Տէր այր մի, որ փրկեսցէ զնոսա» (Ես. ԺԹ 20): Եւ դարձեալ ` «Ոչ պատգամաւոր ոք եւ ոչ հրեշտակ, այլ ինքն՝ Տէր եկեսցէ եւ փրկեսցէ զնոսա» ( Ես. ԿԳ 9):Եւ թէ՛ «Ծաղկեսցէ Իսրայէլ եւ լցցի ամենայն երկիր պտղով նորա» (Ես. ԻԷ 6):<sup>7</sup> Եւ ի դիմաց Քրիստոսի ասէ՛<sup>8</sup>. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ ամ իսկ զիս» (Ես.ԿԱ 1,Ղուկ. Դ 18), իսկ Ովսէէ ասէ՛<sup>9</sup>.» Պատմէ ի մէջ մարդկան զամբեալ իւր» (Ամ. Դ 13), եւ թէ՛”-Մարմին իմ ի նոցանէ է» (Ովս. Թ 12), եւ Միքիաս<sup>10</sup>. «Դու Բեթլէէմ երկիր, ի քէն ելցէ ինձ իշխան, եւ ելք նորա ի սկզբանէ աշխարհի» (Միք. Ե 2), եւ Սոփոնիայ. «Ես եկից եւ բնակեցայց ի քեզ» (Չաք. Բ 10), Դանիէլ.”Տեսանէի, զի վէմ հատանէր ի լեառնէ առանց ձեռին մարդոյ, եւ եղեւ վէմն լեառն մեծ , եւ ելից զտիեզերս<sup>11</sup>» (Դան.Բ 34,35), եւ թէ՛ «Եաւթանասուն եւ եաւթներորդք են մինչեւ ցԱծեալն» (Դան.Թ 25), Ամբակում.”Որ գալոցն է, եկեսցէ, եւ ոչ յամեսցի<sup>12</sup>» (Ամբ. Բ 3), եւ թէ՛”Ի մերձենալ ամաց յայտնեսցիս , ի հասանել ժամանակին երեսեսցիս<sup>13</sup>» (Ամբ. Գ 2), Երեմիաս. «Հոգի երեսաց մերոց Տէր Քրիստոս» ( Ողբ Դ 20), եւ թէ՛ «Յերկրի երե-

<sup>1</sup> ԱԳ > ասէ

<sup>2</sup> Ա > ասէ

<sup>3</sup> Գ > Սողոմոն ասէ...եւ Բ > եւ

<sup>4</sup> ԱԴ> ասէ

<sup>5</sup> ԱԳ > եւ

<sup>6</sup> Դ կոչեսցէ Էմմանուէլ ] ծնցի

<sup>7</sup> ԱԲ > եւ թէ՛ ` Եկեսցէ ի Սիոնէ փրկիչ...պտղով նորա

<sup>8</sup> Ա > ասէ

<sup>9</sup> Գ պատմէ ] ասէ ԲԳ > ասէ

<sup>10</sup> ԳԴ Միքիաս թէ Ա Միքիայ

<sup>11</sup> Դ զերկիր ] զտիեզերս

<sup>12</sup> Դ յամեսցէ

<sup>13</sup> Դ յայտնեսցիս ] երեսեսցիս



ւեսցի եւ ընդ մարդկան շրջեսցի» (Բար. Գ 38), եւ՝ Եզեկիէլ. «Յաւոր // (31բ) յայնմիկ ծագեսցի եղջիր տանն Իսրայէլի» (Եզեկ. ԻԹ 21), եւ թէ՛<sup>1</sup> «Դուռն այս<sup>3</sup> փակեալ կացցէ, եւ ոչ ոք մտցէ, բայց Տէր Աստուած Իսրայէլի» (Եզեկ. ԽԴ 2): Արդ, նոքա ըստ բացակայութեան ժամանակին զայս ինչ ասացին<sup>4</sup>, իսկ Չաքարիաս մերձ գոլով<sup>5</sup> ի լրումն տնաւրինական գործոցն Քրիստոսի գոչէ հնոյն Իսրայէլի. Ահա ազդեալն ի մարգարէիցն թագաւորն քո գա<sup>6</sup>, զի ընդ գալստեանն յայտնելոյ եւ թագաւոր զնա նշանակեցին, ընդ որում Յակոբ ասէ նահապետն<sup>7</sup>. «Մի՛ պակասեսցէ իշխան Յուդայ եւ մի՛ պետ յերանաց նորա, մինչեւ եկեսցէ այն, որ իւրն է, եւ նա է ակնկալութիւն հեթանոսաց» (Ծնդ. ԽԹ 10), Դաւիթ ասէ<sup>8</sup>. «Երդուաւ, ասէ Տէր, թէ ի պտղոյ որովայնէ քո նստուցից յաթոռ քո, եւ թէ տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն եւ իշխանութիւն քեզ» (Աղմ. ՃԼԱ 11), եւ<sup>9</sup> Եսայի ասէ<sup>10</sup>, թէ՛ «Յաթոռն Դաւթի նստցի, եւ զարքայութիւն նորա յաջողեսցի» (Ես. Թ 7), եւ թէ՛ «Տայ զփականս Դաւթի նմա» (Ես. ԻԲ 22), եւ թէ՛<sup>11</sup> «Նստցի աթոռ փառաց հաւր իւրոյ» (Ես. ԻԲ 23), եւ դարձեալ՝ «Բղխեսցէ գաւազան արմատոյն Յեսեայ, եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի» (Ես. ԺԱ 1), Երեմիայ. «Ծագեցից Դաւթի ծագումն արդարութեան, եւ թէ՛<sup>12</sup> զԴաւիթ արքայ յարուցից նոցա» (Երեմ. ԼԳ 15), Դանիէլ. «Ահա իբրեւ որդի մարդոյ մատուցաւ առ // (32ա) հինաւորցն, եւ նմա տուաւ իշխանութիւն, եւ թագաւորութիւն նորա ոչ անցցէ» (Դան. Է 13), եւ թէ՛ «Յարուցէ Աստուած յերկնից թագաւորութիւն, որ յալիտեան ոչ եղծանիցի, եւ այլում ոչ տացի» (Դան. Զ 26): Զի Բանն Հաւր եւ լոյս ընդ անսկզբնական<sup>13</sup> թագաւորութեան, զոր ունէր ընդ Հաւր, եւ մարմնով թագաւորեաց ի վերայ երկրի, ըստ

<sup>1</sup> ԳԴ > եւ

<sup>2</sup> Գ > թէ

<sup>3</sup> Դ այն

<sup>4</sup> ԱԳԴ > ասացին

<sup>5</sup> ԱԲ կալով ] գոլով

<sup>6</sup> ԱԲ > գա

<sup>7</sup> ԳԴ > նահապետն

<sup>8</sup> ԱԳԴ > ասէ

<sup>9</sup> ԱԳ > եւ

<sup>10</sup> ԱԳ > ասէ

<sup>11</sup> Դ > թէ

<sup>12</sup> ԱԲ > թէ

<sup>13</sup> ԱԲ սկզբնական

որում ասաց. «Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի» (Մտթ. ԻԸ 18): Արդ, զայսմանէ՛ թագաւորէ աւետարանէ Ջաքարիայ<sup>2</sup>, թէ՛ **Ուրախ լեր յոյժ, դուստր Սիոնի եւ քարոզեա , դուստր Երուսաղէմի, ա-հա թագաւոր քո գայ առ քեզ՝ արդար եւ փրկիչ:** Բայց քննել արժան է, թէ<sup>3</sup> զբոլորից թագաւորն ընդէ՛ր Իսրայէլի ասաց միայն<sup>4</sup>. զի ըստ մարմնոյ ի նոցանէ յայտնեցաւ, որպէս ինքն Տէրն<sup>5</sup> ասաց առ սամարուիին, թէ՛ «փրկութիւն ի հրէից է» (Յովի. Դ 22), եւ թէ՛ «Ոչ ուրեք առաքեցայ, թէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի» (Մտթ. ԺԵ 24), եւ թէ՛ «Չէ բարւոք զհաց մանկանց տալ շանց» (Մտթ. ԺԵ 26): Եւ Պաւղոս<sup>7</sup>, թէ՛ «Յորոց Քրիստոս ըստ մարմնոյ» (Հռոմ. Թ 5), եւ թէ՛ «Ձեզ բանս այս փրկութիւն առաքեցաւ» (Գործ. ԺԲ 26), եւ թէ՛ Է՛ր վասն<sup>8</sup> Քրիստոս<sup>9</sup> առ նոսա կամեցաւ նախ գալ. զի ընտրեալք էին ի նախնումն, որք մի՛ պատճառեցեն, թէ վասն այնորիկ ոչ հաւատացաք, զի ոչ<sup>10</sup> նախ<sup>11</sup> առ մեզ եկն<sup>12</sup>: Իսկ պատուեաց զնոսա յառաջնումն, եւ ընտրեաց վասն //(32բ) նախնեացն միանգամայն, զի նոքաւք նախանձ արկցէ ամենայն աշխարհի՛ գալ յաստուածգիտութիւն, զի սովոր է Աստուած սակաւութ զբազումս<sup>13</sup> շահել, որպէս երկոտասան առաքելովքն՝ զամենայն տիեզերս: Իսկ նոքա փոխանակ բարեաց արինակ լինելոյ պատճառ չարեաց տեսողացն եւ հայիոյութիւն անուանն Աստուծոյ լինէին: «Վասն ձեր, ասէ, անունն իմ հայիոյի ի մէջ հեթանոսաց» (Ես. ԾԲ 5), եւ նոքա իսկ ի հնումն եւ ի նորումս դիմադարձ գտան Աստուծոյ:

(Շարունակելի)

<sup>1</sup> Բ գայսմ

<sup>2</sup> ԳԴ ասէ Ջաքարիաս ] թագաւորէ ...Ջաքարիա

<sup>3</sup> Գ եւ ] բայց ...թէ

<sup>4</sup> Գ միայն ասէ Բ միայնո ասէԳ միայն ասաց

<sup>5</sup> ԳԴ > Տէրն

<sup>6</sup> Ա > թէ

<sup>7</sup> Բ Պաւղոս ասէ

<sup>8</sup> Բ > վասն

<sup>9</sup> ԱԲ > Քրիստոս

<sup>10</sup> ԱԲ > ոչ

<sup>11</sup> Դ նախ ոչ

<sup>12</sup> ԱԲ ոչ եկն

<sup>13</sup> Ա բազումս

*Բանալի բաներ. Ճաներ, մատենագիր, ժառանգություն, դպրոց, այլաբանական բացատրություն, «նկարագիր», «իմացումն», համանվանական, բազմիմաստ կիրառություններ, հասկացություններ*

## ОДНА СТРАНИЦА ИЗ БОГОСЛОВСКОГО НАСЛЕДИЯ ТИРАТУРА ВАРДАПЕТА КИЛИКЕЦИ

*Акоб Кёсеян*

**Ключевые слова:** *гомиллии, писатель, наследие, школа, аллегорическое толкование, “описание”, “знание”, омонимичность, многозначное использование, понятия.*

Тиратур Киликеци – книжник XIV века. В Гладзоре он был учеником выдающегося церковного деятеля, педагога, книжника Есаи Нчеци. В 1309, 1321 гг. в копиях рукописей упоминается в качестве писателя и получателя, а в 1337 г. наряду с Есаи Нчеци как “верховный учитель”. После кончины Нчеци в 1338 г. в Гермоне создает монастырскую школу, где и преподает долгие годы. Помимо педагогической, Тиратур занимался литературной деятельностью. Оставил гомиллии с глубоким богословским содержанием. Настоящая публикация посвящена одной из его гомилий с эпиграфом “Радуйся сильно, дочь Сиона, Проповедуй, дочь Иерусалима...” (Зах. 9, 9). В работе представляется критический текст гомилии, а в исследовании рассматривается его богословское содержание.

## ONE PAGE FROM THE THEOLOGICAL HERITAGE OF TIRATUR VARDAPET KILIKETSI

*Hakob Kyoseyan*

**Keywords:** *homilies, writer, heritage, school, allegoric exegesis, „description”, „knowledge”, homonymy, polysemantic use, concept.*

Tiratur Kiliketsi is the 14th century writer. He was the student of outstanding Church writer, scholar, and teacher Esayi Nchetsi in Gladzor. He was mentioned as a writer and recipient in copied manuscripts of 1309 and 1321, but in 1337 with Esayi Nchetsi as a «Great Teacher». After the dead of Nchetsi, Tiratur Kiliketsi established the monastery school in 1338 in Hermon, where he taught for many years. In addition to teaching, he was also a writer. He wrote deap theological homilies. This study is devoted to one of his homilies with epigraph «Be glad,

daughter of Sion, preach daughter of Jerusalem...» («Ուրախ լեր յոյժ դուստր Սիոնի, քարոզեա դուստր Երուսաղէմի...») (Zack. 9; 9-12).

This work presents a critical text of homily and the study of its theological content.

-----

**Հակոբ Քրոսեան** - փիլ. գիտ. դոկտոր, ԵՊՀ Աստվածաբանության ամբիոնի վարիչ, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիրաշխատող

**Акоп Кйосеян** - доктор философских наук, заведующий кафедрой Богословия факультета Богословия ЕГУ, старший сотрудник Матенадарана-института древних рукописей имени Месропа Маштоца

**Hakob Qoseyan** - Sc. D. in Philosophy, Head of chair of Theology at the YSU Faculty of Theology, Senior resaercher of Matenadaran - Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots